ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 13 >> հոկտեմբեր 2011թ N 45
Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ << ՄԱԼԻՇԿԱՅԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) կարգը հաստատելու մասին>> N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 31-րդ, 32-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի պահանջներով և հիմք ընդունելով Մալիշկայի թիվ 2 միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի նախագահի 2011 թվականի հոկտեմբերի 7-ի N 13-11 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Մալիշկայի թիվ 2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթը համապատասխանում է հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի պահանջներին.
2) Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ԲԱԳՐԱՏՅԱՆ